ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 մարտի 2014 թվականի N 82-Ա

ք. Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ <<ԿՈՏԱՅՔԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ>>, <<ՄԱՅԱԿՈՎՍԿՈՒ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ԵՎ <<ԱԲՈՎՅԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹՆԵՐՆ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2012 թվականի փետրվարի 2-ի N 32-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 6-րդ և 7-րդ կետերի՝ **որոշում եմ.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Կոտայքի առողջության առաջնային պահպանման կենտրոն>>, <<Մայակովսկու առողջության առաջնային պահպանման կենտրոն>> և <<Աբովյանի բշժկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերությունների տնօրենների թափուր պաշտոններն զբաղեցնելու համար մրցույթներն անցկացնող մրցութային հանձնաժողովի կազմը՝

1) *Կավպենկո Շահգալդյան* - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետ,

2) *Կարեն Մարգարյան* - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի տեղակալ,

3) *Մարզպետ Գարեգինյան* - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար,

4) *Գայանե Մարտիրոսյան* - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ,

5) *Ջուլիետա Բուբուշյան* - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության պետ,

6) *Նաիրա Մարգարյան* - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի պետ,

7) *Վահագն Նազլոյան* - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժնի պետ,

2. Հանձնաժողովի նախագահ նշանակել՝ *Կ. Շահգալդյանին*, քարտուղար՝ *Վ. Նազլոյանին*:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ